Արձանագրության 3

Երևան քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման և վերելակների վերանորոգման համար սարքավորումների ձեռքբերման /տեղադրումով/ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-19/117 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 08.07.2019թ.
ժամը՝ 11:45

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Սարգսյան /գնահատող/, Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Համբարձումյան
Բացակայում էր՝	Ռ. Աբրահամյան /գնահատող/

1. Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Ա. Կիրակոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց հարկային պարտավորություն և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերի պահանջներին:

1.2 Ծանուցվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Կիրակոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ԳՐԻՏԻԳ ՍՊԸ	Բավարար
Մառք ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

3. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/117 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/117» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել.

-1,2,4,5,6,8 չափաբաժինների մասով ԳՐԻՏԻԳ ՍՊԸ-ին,

-3,7 չափաբաժինների մասով Մառք ՍՊԸ-ին և վերջիններիս ներկայացնել **Երևան քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման և վերելակների վերանորոգման համար սարքավորումների ձեռքբերման /տեղադրումով/ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ,

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:25-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Սարգսյան

---------- Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան